

COVID-19-ով վարակված անձանց հետ շփման կառավարման պլանի արձանագրություն
Նախադպրոցական Խնամքի և Կրթական Հաստատությունների համար

Վերջին Թարմացումները` (Փոփոխությունները նշված են դեղին գույնով)

12/28/20`

- ECC Կենտրոններից պահանջվում է տեղեկացնել Հանրային Առողջապահության Վարչությանը (DPH) աշխատակիցների և աշակերտների շրջանում COVID-19-ով վարակման դեպքերի մասին, որոնք 14 օրերի ընթացքում նախքան հիվանդանալը գտնվել են տվյալ հաստատության որևէ տարածքում: Վարակման այն դեպքերը, որոնք 14 օրերի ընթացքում, նախքան հիվանդանալը, վերջինս են գտնվել տվյալ տարածքում, անհրաժեշտ չէ հայտնել Հանրային Առողջապահության Վարչությանը ECE Կենտրոնների կողմից:
- Սերտ շփումներ/Կոնտակտավորներ սահմանումը թարմացվել է` ներառելու (1) 24 ժամվա ընթացքում վարակված անձից ընդհանուր առմամբ 15 րոպե կամ ավելի 6 ոտնաչափ հեռավորության վրա գտնվելը: (2) Անձանց, որոնք վարակված անձի հետ միասին` վերջինիս վարակող եղած ժամանակահատվածում ներկա են գտնվել միևնույն խմբում կամ դասասենյակում:
- Կրճատվել է ինքնամեկուսացում պահպանելու պահանջվող ժամանակահատվածն այն անձանց համար, որոնք COVID-19-ով ախտորոշված անձի հետ սերտ շփման մեջ են եղել: Կոնտակտավորները, որոնք շարունակում են ախտանիշներ չդրսևորել (ասիմպտոմատիկ), կարող են դուրս գալ կարանտինից 10 Օր անց, սակայն 14 Օրերի ընթացքում պետք է շարունակեն վերահսկել իրենց առողջական վիճակը և խստորեն հետևեն COVID-19-ի կանխարգելիչ նախագրուշական միջոցներին:

Համայնքային մակարդակում COVID-19-ով վարակված անձանց հետ շփման զսպմանը թիրախավորված հանրային առողջապահության արձագանքը կարող է օգնել առավելագույնի հասցնելու Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչության` COVID-19-ի արձագանքի ազդեցությունը:

Նախադպրոցական Խնամք և Կրթություն տրամադրողները համայնքի վստահված համագործակիցներն են, որոնք կարող են օգնել Հանրային Առողջապահության Վարչությանը` բարելավել Հանրային Առողջապահության արձագանքի ժամկետներն ու ազդեցությունը COVID-19-ով վարակված անձանց հետ Շփման Կառավարման Պլանի արագ մշակման միջոցով: Շփման Կառավարման Պլանի անմիջապես իրագործումը Նախադպրոցական Խնամքի և Կրթության Հաստատությունում COVID-19-ով վարակման մեկ դեպքի հայտնաբերումից հետո, կարող է արագացնել COVID-19-ի տարածման զսպման կարողությունը և կանխարգելիչ այդ մեկ դեպքի տվյալ վայրում բռնկում դառնալը:

Նախադպրոցական Խնամքի և Կրթության Հաստատություններում COVID-19-ի 1,2 և 3 կամ ավելի վարակակիրների հետ շփումների կառավարման քայլերը նկարագրված են ստորև և ամփոփված Հավելված Ա-ում: Քանի որ Նախադպրոցական Խնամքի և Կրթության Հաստատությունները կունենան COVID-19-ով վարակակիրի հետ շփումների կառավարման

համար ռեսուրսների տարբեր մակարդակներ, *պահանջվող* քայլերն այն նվազագույնն են, որ պետք է ընդգրկված լինեն Շփման Կառավարման Պլանում: *Խորհուրդ տրվող* քայլերն ընդգրկում են շփման կառավարման ընտրովի տարրեր, եթե կենտրոնի ռեսուրսները բավարար են:

Նկատի ունենալ, որ «կենտրոններին», «հաստատություններին» կամ «վայրերին» արված բոլոր հղումները վերաբերում են երեխաներին խնամք մատակարարողներին, ներառյալ երեխաներին տանը խնամք տրամադրողներին: «Դեպք» (վարակված անձ/ տուժած) բառն օգտագործվում է՝ հղում անելու Նախադպրոցական Խնամքի և Կրթության Հաստատության հետ կապ ունեցող այն անձին, ով վարակված է COVID-19-ով: Այն դեպքում, երբ սույն փաստաթուղթը գործողության կոչ է անում հաստատությանը՝ հաստատված դեպքի առթիվ (օրինակ՝ տրամադրել ցուցումներ), ապա դեպքը անձնակազմի վարակվող անձն է, կամ էլ վարակվող երեխայի ծնողը (կամ խնամակալը/հոգաբարձուն):

**Շփման Կառավարման Պլանավորում Մինչև 1 COVID-19 Դեպքի Հայտնաբերումը
Նախադպրոցական Խնամքի և Կրթության Հաստատությունում**

☐ *Պահանջվում է.* Նախադպրոցական Խնամքի և Կրթության Կենտրոններում COVID-19-ի հարցերով հատուկ նշանակված անձ, ով ծառայում է որպես կոնտակտային անձ՝ COVID-19-ի ապահովության արձանագրությունների համար: Նշանակված անձը կապահովի, որ անձնակազմը, ընտանիքներն ու երեխաները ստանան տեղեկություն COVID-19-ի վերաբերյալ և կծառայի որպես կոնտակտային անձ Հանրային Առողջապահության Վարչությունում հաստատության մակարդակով տեղեկություններ տարածելու համար, որը և կթերևացնի Հանրային Առողջապահության գործը:

☐ *Պահանջվում է.* ECE հաստատությունը պետք է հետևի Հանրային Առողջապահության [Որոշումներին](#), որոնք հասցեագրված են այն անձանց, որոնց ախտանիշների ստուգման պատասխանը մինչև ECE հաստատություն մուտք գործելը կամ ECE հաստատության տարածքում գտնվելիս եղել է դրական:

**Շփման Կառավարում Նախադպրոցական Խնամքի և Կրթության Հաստատությունում
COVID-19-ով 1 Վարակակրի Հայտնաբերման Դեպքում**

☐ *Պահանջվում է.* Լաբորատոր հաստատումով COVID-19-ով վարակման 1 դեպքի հայտնաբերումից հետո (երեխա կամ աշխատակից), Նախադպրոցական Խնամք և Կրթություն տրամադրողը պետք է հրահանգի տվյալ անձին՝ հետևել COVID-19-ով վարակվելու դեպքում տնամեկուսացման հրահանգներին՝ (ph.lacounty.gov/covidisolation).

☐ *Պահանջվում է.* Նախադպրոցական Խնամք և Կրթություն տրամադրողը պետք է տեղեկացնի տվյալ անձին, որ Հանրային Առողջապահության Վարչությունը ուղիղ կապ կհաստատի նրա հետ՝

Հանրային Առողջապահության Վարչության Վարակակիրների և Կոնտակտավորների քննության ծրագրի միջոցով՝ հավաքագրելու լրացուցիչ տեղեկություն և տալու Առողջապահության Պատասխանատուի՝ Վարակակրի Մեկուսացման Հրամանը:

□ *Պահանջվում է.* ECE Կենտրոնի COVID-19-ի Կոնտակտային Անձը պետք է տեղեկացնի Հանրային Առողջապահության Վարչությանը (DPH) աշխատակիցների և աշակերտների շրջանում բոլոր COVID-19-ով վարակման դեպքերի, ինչպես նաև Կենտրոնում վարակված անձանց մասին, որոնք նախքան հիվանդանալը 14 օրերի ընթացքում գտնվել են Կենտրոնի որևէ տարածքում: Անհրաժեշտ է տեղեկացումը հայտնել էլեկտրոնային տարբերակով՝ լրացնելով [COVID-19-ով Վարակման Դեպքերի և Կոնտակտավորների Ցանկը Կրթական Հաստատությունների համար](#) և ուղարկելով լրացված ցանկը հետևյալ հասցով՝ ACDC-Education@ph.lacounty.gov՝ 1 աշխատանքային օրվա ընթացքում՝ դեպքի մասին տեղեկանալուց հետո:

- Վարակված անձը համարվում է վարակող՝ ախտանշանների ի հայտ գալուց 2 օր առաջ և մինչ այն պահը, երբ այլևս անհրաժեշտ չէ մեկուսանալ (այսինքն՝ առնվազն 24 ժամ չի ունեցել ջերմություն՝ առանց ջերմիջեցնող դեղամիջոցների օգտագործման, ԵՎ մյուս ախտանշանները բարելավվել են, ԵՎ ախտանշանների ի հայտ գալուց ի վեր անցել է առնվազն 10 օր): COVID-19 –ի դրական թեստ ունեցող անձը, ով չունի ախտանշաններ, համարվում է վարակող՝ թեստը հանձնելուց 2 օր առաջ և մինչև թեստը հանձնելուց հետո՝ 10 օր:
- Անձը համարվում է վարակակրի հետ շփված՝ ստորև նշված կետերից որևէ մեկի դեպքում.
 - Անձ, ով 24 ժամվա ընթացքում եղել է վարակված անձից 6 ոտնաչափ հեռավորության վրա [ընդհանուր առմամբ 15 րոպե կամ ավելի](#), նույնիսկ եթե կրել է ոչ բժշկական դիմակ;
 - Անձ, ով ունեցել է չպաշտպանված շփում վարակված անձի մարմնի հեղուկների և/կամ COVID-19-ով հաստատված կամ կասկածվող անձի մարմնի արտադրությունների հետ (օրինակ՝ անձի վրա փռչտացել կամ հագացել են, համատեղ օգտագործվել են սպասք կամ փոխանակվել է թուք, կամ անձը ինամել է վարակակրին՝ առանց համապատասխան պաշտպանիչ միջոցներ օգտագործելու):
 - Անձինք, որոնք վարակված անձի հետ միասին՝ վերջինիս վարակող եղած ժամանակահատվածում ներկա են գտնվել միևնույն խմբում կամ դասասենյակում, համարվում են սերտ շփում ունեցող/կոնտակտավոր:

□ *Պահանջվում է.* Երեխաները և աշխատակիցները, ովքեր հայտնաբերվել են, որ շփվել են տվյալ հաստատությունում վարակված անձի հետ, ծանուցվում են Նախադպրոցական Խնամք և Կրթություն տրամադրողի կողմից նամակով, կամ կապի այլ միջոցներով: Շփման վերաբերյալ ծանուցման նամակի ձևաթուղթը հասանելի է այստեղ՝ [Կրթական հաստատությունների համար COVID-19-ի մասին ծանուցման նամակի ձևանմուշ](#): Վարակված անձի հետ շփման մասին ծանուցումը պետք է ընդգրկի հետևյալ ուղերձները.

- Վարակված անձի հետ շփում ունեցած աշխատակիցներն ու երեխաները պետք է թեստավորվեն COVID-19-ի համար՝ անկախ նրանից՝ ունեն ախտանշաններ թե ոչ, և տեղեկացնեն Նախադպրոցական Խնամք և Կրթություն տրամադրողին իրենց թեստի

արդյունքները: Սրանով կորոշվի հիվանդության տարածման չափը՝ Նախադպրոցական Խնամքի և Կրթության Հաստատությունում և այն կծառայի որպես հիմք՝ հետագա հսկողության միջոցների համար: Թեստավորման ռեսուրսներն ընդգրկում են. Աշխատողների Առողջապահության Ծառայություններ կամ Մասնագիտական Առողջապահության Ծառայություններ, Անձնական Առողջապահության Մատակարարներ, Համայնքային Թեստավորման Տարածքներ. covid19.lacounty.gov/testing: Այն անհատները, ովքեր օգնության կարիք ունեն գտնելու բժշկական խնամք տրամադրող, կարող են զանգահարել Լոս Անջելեսի տեղեկատվական գիծ՝ 2-1-1 հեռախոսահամարով, որը հասանելի է 24/7:

- Վարակված անձի հետ շփում ունեցած աշխատակիցներն ու երեխաները պետք է ինքնակարանտին պահպանեն (մնան իրենց տանը կամ այլ բնակավայրում՝ մյուսներից առանձին) և վերահսկեն իրենց ախտանիշները՝ 10 օր շարունակ՝ սկսած այն օրվանից, երբ նրանք վերջին անգամ շփվել են վարակված անձի հետ՝ վարակող եղած ժամանակահատվածում (ինչպես սահմանված է վերևում)՝ և նույնիսկ, եթե կարանտին պահպանելու ընթացքում իրենց թեստի պատասխանը լինի բացասական: Եթե նրանց մոտ դեռևս ախտանիշներ չդրսևորվեն (ասիմպտոմատիկ) , ապա նրանք պետք է դուրս գան կարանտինից 10 Օր անց, սակայն 14 Օրերի ընթացքում պետք է շարունակեն վերահսկել իրենց առողջական վիճակը և խստորեն հետևեն COVID-19-ի կանխարգելիչ նախազգուշական միջոցներին: Բացասական արդյունք ունեցող անձի օրգանիզմում կարող է այնուամենայնիվ զարգանալ հիվանդություն՝ ախտանշաններով կամ առանց ախտանշանների, եթե նա թեստավորվել է ինկուբացիոն շրջանում (շփման և հիվանդության սկզբի միջև ընկած ժամանակահատվածում): COVID-19-ի համար տնային կարանտինի ուղեցույցը հասանելի է այստեղ՝ ph.lacounty.gov/covidquarantine.
- Հանրային Առողջապահության Վարչությունը կհաստատի կապ՝ վարակված անձի հետ շփում ունեցած աշխատակիցների և երեխաների հետ՝ Հանրային Առողջապահության Վարչության Վարակակիրների և Կոնտակտավորների քննության ծրագրի միջոցով՝ հավաքագրելու լրացուցիչ տեղեկություն և տալու Առողջապահության Պատասխանատուի Կարանտինի Հրամանը:

Խորհուրդ է տրվում. Նախադպրոցական Խնամք և Կրթություն տրամադրողը պետք է որոշի՝ արդյոք անհրաժեշտ է լրացուցիչ ծանուցում՝ տեղեկացնելու Նախադպրոցական Խնամքի և Կրթության Կենտրոնի ավելի լայն համայնքին՝ հաստատությունում վարակված անձի հետ շփման և COVID-19-ը կանխելու նպատակով ձեռնարկված քայլերի մասին : Ծանուցման նամակի ընդհանուր ձևանմուշը հասանելի է այստեղ՝ [Կրթական հաստատությունների համար COVID-19-ի մասին ծանուցման նամակի ձևանմուշ:](#)

Շփման Կառավարումը Նախադպրոցական Խնամքի և Կրթության Հաստատությունում COVID-19-ով 2 Վարակակիրների Հայտնաբերման Դեպքում՝ 14 Օրվա Ընթացքում

Պահանջվում է. 14 օրվա ընթացքում լաբորատոր հաստատումով 2 վարակված անձանց հայտնաբերման դեպքում (երեխաներ և/կամ աշխատակիցներ), Նախադպրոցական Խնամք և Կրթություն տրամադրողը հետևում է 1 հաստատված դեպքի համար *պահանջվող* քայլերին:

□ *Խորհուրդ է տրվում.* Նախադպրոցական Խնամք և Կրթություն տրամադրողը որոշում է՝ արդյոք երկու հաստատված դեպքերը էպիդեմիոլոգիապես կապված են, այսինքն՝ երկու վարակված անձինք ներկա են եղել ինչ-որ պահի միևնույն միջավայրում, միևնույն ժամանակահատվածում, երբ իրենք վարակող էին*:

** Վարակված անձը համարվում է վարակող, ախտանշանների ի հայտ գալուց 2 օր առաջ և մինչ այն պահը, երբ այլևս անհրաժեշտ չէ մեկուսանալ (այսինքն՝ առնվազն 24 ժամ չի ունեցել ջերմություն՝ առանց ջերմիջեցնող դեղամիջոցների օգտագործման, ԵՎ ախտանշանները բարելավվել են, ինչպես նաև ախտանշանների ի հայտ գալուց ի վեր անցել է առնվազն 10 օր): COVID-19 –ի դրական թեստ ունեցող անձը, ով չունի ախտանշաններ, համարվում է վարակող՝ թեստը հանձնելուց 2 օր առաջ և թեստը հանձնելուց հետո մինչև 10 օր:*

- Վարակված անձանց միջև էպիդեմիոլոգիական (համաճարակային) կապերի որոշման համար հնարավոր է, որ անհրաժեշտ լինի հետագա քննություն՝ գնահատելու շփման պատմությունն ու հայտնաբերելու բոլոր հնարավոր վայրերը և անձանց, ովքեր կարող են շփված լինել վարակված անձի հետ տվյալ հաստատության տարածքում, վերջինիս վարակող լինելու ժամանակահատվածում: ԾԱՆՈՒՑՈՒՄ՝ էպիդեմիոլոգիական (համաճարակային) կապերը ներառում են անձանց, ովքեր ունեն իրար հետ նույնականացվող կապեր՝ ինչպես օրինակ ֆիզիկական տարածքը համատեղ օգտագործելը (օրինակ՝ դասարանում, գրասենյակում կամ հավաքույթների ժամանակ), որը մատնանշում է հիվանդության փոխկապակցված տարածման ավելի բարձր հավանականությունը տվյալ հաստատությունում, քան եզակի փոխանցումը ավելի լայն համայնքի շրջանակում: էպիդեմիոլոգիական կապերի գնահատման հարցում օգնող տեղեկությունները հասանելի են այստեղ՝ [COVID-19-ով վարակված անձանց քննության ստուգաթերթ կրթական ոլորտի համար](#): էպիդեմիոլոգիական կապերի գնահատման տեխնիկական օգնության համար կարելի է կապ հաստատել՝ ACDC-Education@ph.lacounty.gov:
- Եթե էպիդեմիոլոգիական կապեր չկան, Նախադպրոցական Խնամք և Կրթություն տրամադրողը շարունակում է շփման ամենօրյա կառավարումը:
- Եթե էպիդեմիոլոգիական կապեր կան, ապա Նախադպրոցական Խնամք և Կրթություն տրամադրողը ուժեղացնում է իր ուղերձները հղված երեխաներին, ծնողներին/խնամակալներին/հոգաբարձուներին և աշխատակիցներին, որպեսզի ձեռնարկվի քայլեր՝ կանխարգելելու հաստատությունում վարակի տարածումը, ինչպես նաև իրականացնելու տեղանքին հատուկ միջամտություններ:

**Շփման Կառավարումը Նախադպրոցական Խնամքի և Կրթության
Հաստատությունում COVID-19-ով ≥ 3 Վարակակիրների Հայտնաբերման Դեպքում՝
14 օրվա Ընթացքում**

□ *Պահանջվում է.* Եթե՝ Նախադպրոցական Խնամքի և Կրթության տրամադրողը հայտնաբերում է լաբորատոր հաստատված 3 կամ ավելի դեպքերի խումբ երեխաների և/կամ աշխատակիցների մոտ՝ 14 օրվա ընթացքում, ապա Նախադպրոցական Խնամք և Կրթություն տրամադրողը պետք է շարունակի կատարել հետևյալ քայլերը.

- **Անմիջապես** հայտնել խմբի մասին Հանրային Առողջապահության Վարչության Սուր Վարակիչ Հիվանդությունների Կենտրոնի կրթական ոլորտի թիմին՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ հետևյալ էլեկտրոնային հասցեով՝ ACDC-Education@ph.lacounty.gov կամ զանգահարելով (888) 397-3993 կամ (213) 240-7821 հեռախոսահամարներով:
- Լրացնել *Դեպքերի և Կոնտակտավորների Ցանկը*, որը հասանելի է հետևյալ կայքում՝ [COVID-19 դեպքերի և կոնտակտավորների ցանկ կրթական ոլորտի համար](#) և հանձնել այն՝ ACDC-Education@ph.lacounty.gov-ին: Ցանկը լրացնելու վերաբերյալ տեխնիկական հարցերով կարելի է կապ հաստատել՝ ACDC-Education@ph.lacounty.gov:
- Սուր Վարակիչ Հիվանդությունների Կենտրոնի կրթական ոլորտի թիմը պետք է վերանայի *Դեպքերի և Կոնտակտավորների ցանկը*՝ որոշելու համար, թե արդյոք բռնկման չափանիշները բավարարվել են: Սուր Վարակիչ Հիվանդությունների Կենտրոնի կրթական ոլորտի թիմը պետք է կապ հաստատի Նախադպրոցական Խնամքի և Կրթության տրամադրողի հետ 1 աշխատանքային օրվա ընթացքում՝ խորհրդակցելու հաջորդ կատարվելիք քայլերը:
- Եթե բռնկման չափորոշիչները բավարար չեն, Նախադպրոցական Խնամք և Կրթություն տրամադրողը շարունակում է շփման առօրյա կառավարումը:
- Եթե բռնկման չափորոշիչները բավարարված են, գործի է անցնում Հանրային Առողջապահության Վարչության Բռնկումների Կառավարման ճյուղը:
- Նշանակվում է Բռնկումների Կառավարման ճյուղի քննիչ՝ համագործակցելու Նախադպրոցական Խնամք և Կրթություն տրամադրողի հետ, որպեսզի համակարգվի բռնկման կառավարումը՝ բռնկման քննության ժամանակահատվածում:
- Նախադպրոցական Խնամք և Կրթություն տրամադրողի COVID-19-ի հարցերով կոնտակտային անձը Բռնկումների Կառավարման ճյուղի քննիչին կհաղորդի պահանջվող տեղեկություններ, ինչպես նաև *Դեպքերի և Կոնտակտավորների Ցանկի* թարմացումներ, մինչև բռնկումը կլուծվի:

□ *Խորհուրդ է տրվում.* Խմբի մասին, մինչև Հանրային Առողջապահության Վարչության Բռնկումների Կառավարման ճյուղին հաղորդելը, Նախադպրոցական Խնամք և Կրթություն տրամադրողը պետք է որոշի՝ արդյոք խմբից առնվազն 3 դեպք էպիդեմիոլոգիապես կապված են միմյանց հետ: Էպիդեմիոլոգիական կապերի գնահատման հարցում օգնող գործիքը հասանելի է այստեղ՝ [COVID-19-ով վարակված անձանց քննության ստուգաթերթ կրթական ոլորտի համար](#):

COVID-19-ի Բռնկման Չափորոշիչներ Նախադպրոցական Խնամքի և Կրթության Հաստատությունների Համար

Նախադպրոցական Խնամքի և Կրթության Հաստատությունում, մեկ խմբում* առնվազն 3 լաբորատոր հաստատված դեպքեր՝ ախտանշաններով, կամ առանց COVID-19-ի ախտանշանների՝ 14-օրյա ժամանակահատվածում՝ էպիդեմիոլոգիապես իրար հետ կապված անդամների հետ, որոնք միևնույն բնակավայրի կամ տան անդամներ չեն և դպրոցի տարածքից դուրս միմյանց հետ սերտ շփում չունեն:

**Խմբի մեջ մտնում են անձինք, ովքեր ունեն ընդհանուր անդամագրություն (օրինակ՝ միևնույն դասարան, նախադպրոցական խնամքի և կրթության իրադարձություն կամ արտադասարանային գործողություն): Էպիդեմիոլոգիական կապեր կան, եթե վարակված անձինք ինչ-որ պահի ներկա լինեն նույն միջավայրում՝ նույն ժամանակահատվածում, երբ վարակակիր են:*

Հավելված Ա. Քայլեր՝ Կառավարելու Նախադպրոցական Խնամքի և Կրթության
 Հաստատությունում COVID-19-ով Վարակման Դեպքերը:

<p>1 դեպք</p>	<p>1) <i>Պահանջվում է.</i> Նախադպրոցական Խնամք և Կրթություն տրամադրողը պետք է ցուցում տա վարակված անձին՝ հետևել Տնամեկուսացման Ցուցումներին</p> <p>2) <i>Պահանջվում է.</i> Նախադպրոցական Խնամք և Կրթություն տրամադրողը պետք է տեղեկացնի վարակված անձին, որ Հանրային Առողջապահության Վարչությունը ուղիղ կապ կհաստատի նրա հետ՝ հավաքագրելու լրացուցիչ տեղեկություն և տալու Առողջապահության Պատասխանատուի Մեկուսացման Հրամանը</p> <p>3) <i>Պահանջվում է.</i> Նախադպրոցական Խնամք և Կրթություն տրամադրողը պետք է աշխատի վարակված անձի հետ՝ հայտնաբերելու Նախադպրոցական Խնամքի և Կրթության Կենտրոնի կոնտակտավորներին:</p> <p>4) <i>Պահանջվում է.</i> Նախադպրոցական Խնամք և Կրթություն տրամադրողը պետք է ծանուցի* Նախադպրոցական Խնամքի և Կրթության Կենտրոնի կոնտակտավորներին և ցուցում տա նրանց՝ ինքնամեկուսանալ տանը (բ) և թեստավորվել COVID-19-ի համար:</p> <p>5) <i>Պահանջվում է.</i> Նախադպրոցական Խնամք և Կրթություն տրամադրողը պետք է տեղեկացնի Կենտրոնի կոնտակտավորներին, որ Հանրային Առողջապահության Վարչությունը հետևողականորեն հավաքագրելու է լրացուցիչ տեղեկություն և հղելու է Առողջապահության Պատասխանատուի Կարանտինի Հրամանը</p> <p>6) <i>Պահանջվում է.</i> Նախադպրոցական Խնամք և Կրթություն տրամադրողը պետք է ներկայացնի հաստատության տարածքում հաստատված դեպքերի և վարակված անձանց մասին տեղեկություններ՝ օգտագործելով COVID-19 դեպքերի և կոնտակտավորների ցանկը կրթական ոլորտի համար և ուղարկի Հանրային Առողջապահության Վարչություն հետևյալ հասցեով՝ ACDC-Education@ph.lacounty.gov՝ 1 աշխատանքային օրվա ընթացքում:</p> <p>7) <i>Խորհուրդ է տրվում.</i> Նախադպրոցական Խնամք և Կրթություն տրամադրողը պետք է ընդհանուր ծանուցում ուղարկի՝ տեղեկացնելու Նախադպրոցական Խնամքի և Կրթության Կենտրոնի ավելի լայն համայնքին՝ հաստատությունում վարակված անձի հետ շփման և COVID-19-ը կանխելու նպատակով ձեռնարկվող քայլերի մասին: Ընդհանուր ծանուցման և կոնտակտավորների ծանուցման ընդհանուր ձևանմուշը հասանելի է այստեղ՝ * COVID-19-ի մասին ծանուցման նամակի ձևանմուշ կրթական հաստատությունների համար:</p>
<p>2 դեպք</p>	<p>1) <i>Պահանջվում է.</i> Հետևել 1 հաստատված դեպքի համար անհրաժեշտ քայլերին:</p> <p>2) <i>Խորհուրդ է տրվում.</i> Եթե երկու դեպքերն առաջացել են 14 օրվա տարբերությամբ, ապա Նախադպրոցական Խնամք և Կրթություն տրամադրողը պետք է որոշի՝ արդյոք դեպքերը էպիդեմիոլոգիապես կապված են: Դրանք հասանելի են COVID-19 վարակակրի հետ շփման աշխատաթերթիկ կրթական ոլորտի համար կայքում, որն օգնում է գնահատել էպիդեմիոլոգիական կապերը:*</p> <p>Եթե epi կապերն <u>առկա են</u>, ապա ECE հաստատությունները կիրառում են վարակի վերահսկման լրացուցիչ միջոցառումներ:</p>
<p>3+</p>	<p>1) <i>Պահանջվում է.</i> Եթե 3 կամ ավել դեպքերի խումբ է առաջանում միմյանցից 14 օրվա</p>

դեպք

տարբերությամբ, ապա Նախադպրոցական Խնամք և Կրթություն տրամադրողը պետք է **անմիջապես** ծանուցի Հանրային Առողջապահության Վարչությանը հետևյալ հասցեով՝ ACDC-Education@ph.lacounty.gov:

2) *Խորհուրդ է տրվում*. Մինչ Հանրային Առողջապահության Վարչությանը խմբի մասին ծանուցելը, Նախադպրոցական Խնամք և Կրթություն տրամադրողը պետք է որոշի՝ արդյոք առնվազն 3 դեպքերի միջև կա էպիդեմիոլոգիական կապ:

Պահանջվում է. Հանրային Առողջապահության Վարչությունը պետք է հայց ներկայացնի, որ Նախադպրոցական Խնամք և Կրթություն տրամադրողը լրացնի COVID-19 Դեպքերի և Կոնտակտավորների Ցանկը՝ կրթական ոլորտի համար՝ որոշելու, թե արդյոք բռնկման չափորոշիչները բավարարվում են:* Եթե բռնկման չափորոշիչները բավարարվում են, ապա Հանրային Առողջապահության Վարչության Կառավարման Մասնաճյուղը կգործարկվի, և Քննիչը կապ կհաստատի ECE հաստատության հետ՝ համակարգելու բռնկման քննությունը:

3) *Պահանջվում է*. Նախադպրոցական Խնամք և Կրթություն տրամադրողը պետք է թարմացումներ տրամադրի Բռնկումների Կառավարման Ճյուղի քննիչին, մինչև բռնկումը կլուծվի (այսինքն՝ վերջին հաստատված դեպքից առնվազն 14 օր անց):